

Բազուկի բոլոր ազգայնականներն ընդհանուր շահերը պահանջում են, որ այդ անմիտ լուրերին ոչ մի հաստատ չընծայվի: Մի ուրիշ փաստ էլ, որ հայերի և թուրքերի մէջ ոչ մի տարածաշրջան չկա, որտեղ հայերն անհատապես չեն հաշտուել իրենց հակառակորդներին: Նախագահական դադիր ու թուրքը, հայ և ռուս հասարակական անդամները մասնակցութեամբ կազմակերպվել է մի մասնագործ (կոմիտէ), որը պէտք է վերջին օրերում բոլոր ֆրանսիականներին, առանց բացառութեան, օգնութիւն հասցնէ:

Իսկ որպէս զի ազգայնականներն այն անշուշտ մասը, որ առաջ էլ քաղաքի բնակիչներին անհանգստութիւն էր պատճառում, ներկայումս բնակիչներին որ և է փնտս չը հասցնէ և մըտքերին անհիմն պոտորումն չտալացնէ, անհրաժեշտ եմ համարում յայտարարել հետեւեալը:

1) Ժամանակագրապէս արգելել բոլոր Բագուում և նրա հանրային ու գործարանական մասերում ապրողներին տնից դուրս գալ երեկոյեան ժամի 8-ից մինչև առաւօտեան ժամի 6-ը, առանց իմ տուած գրաւոր թոյլտւութեան:

2) Այս կարգադրութիւնը չը կատարողը, բացի այն, որ կենթարկվի զինված ոյժի գործադրած պատահական վտանգին, կենթարկվի նաև պատասխանատւութեան, ուժեղացրած կանոններին հիման վրա, այսինքն 500 բուլլի տուգանքի (շտրաֆ) և մինչև 3 ամսվայ բանտարկութեան:

Այս կարգադրութիւնը ոյժ է ստանում այս փետրվարի 11-ից:

Բագուի նահանգապետ՝ գաղտնի խորհրդական իշխ. Մ. Ա. Նաւաշինէ:

ՓԵՏՐԱՎԱՐԻ 13 ԵՒ 14-Ի ՀՈՒՅՆԱԳԻՍՏՆԵՐԻ

Անմոռալի, փառաւոր, պատմական հոգեհանգիստներ...

Փետրվարի 13-ին Վանքի մայր եկեղեցու բակում մօտ 7000 հայ ժողովուրդի և մանկազակներով հերկու գլխաւոր ճիւղեր—սիւնի և շիա հոգեւորականութեան ու ժողովուրդների ներկայացուցիչները մասնակցութեամբ կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ Բագուի սուկալի աղէտի հայ զոհերի յիշատակին:

Այդ հանդէսը առանձին փայլ ստացաւ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ներկայութեամբ, որ այդօրը ճիշտ ժամը 11½-ին ժամանեց Եջիմածինից թիֆլիս և կարողացաւ զուրկ կանգնել հոգեհանգստին:

Բագուի մայր ժողովուրդը կատարեալ կարգապահութեամբ լուռ և տրտմած, վշտահար աղօթում էր ծնկաչոք իր անմեղ նահապետի եղբայրների հոգու համար: Հրաշալի և օրինակելի էր կարգապահութիւնը. հասարակութիւնը ինքը պահպանում էր կարգը, որ ամբողջ 4 ժամ ոչ մի բանով, նոյն իսկ ամենափոքր ընդհարումով չը խախտվեց:

Նախ քան Վեհափառի դուրս գալը և նըստելը հայրապետական աթոռի վրա, որ գրված էր առաջնորդարանի սանդղակներին գլխին, Վեհափառին ներկայացաւ սուրհմեկների մուֆտին և շիաների շէյխու-ուլ-իսլամի տեղապահը: Իսլամ կրօնի այդ երկու դաւանութեան պիտանքը խորին ցաւ արտայայտեցին տեղի ունեցած աղէտի առթիւ, հաւատարմեցին, որ թիֆլիսի մուսուլման հոգեւորականութիւնը և ժողովուրդը հաւաքվելով մզկիթներում անկեղծ սրտով մոնել է որ և է ընդհարման տեղի չը տալ, ամբապնդել համերաշխութեան և եղբայրական սիրոյ կապերը: Վեհափառը պատասխանեց, որ ինքն երկար տարիներ ապրել է մուսուլման ժողովուրդի մէջ Վանքում, որ գիտէ, թէ յաճախ իսլամ ժողովուրդը, մանաւանդ պարսիկ ժողովուրդը որքան օգնութիւն և եղբայրական աջակցութիւն է ցոյց տուել աղէտների և կոտորածների ժամանակ, ուստի և հաւատացած է, որ այդ արտայայտութիւնները անկեղծ են: Ձեռք չարիք առանց բարիքի, կցեց Վեհափառը. ով գիտէ, զուցէ այս աղէտը այնպէս ամբապնդել եղբայրական կապերը թուրք և հայ ժողովուրդի մէջ, որ ապագայում նրանց համերաշխութիւնը օրինակելի դառնայ:

Երբ վեհափառը, շրջապատված այդ ներկայացուցիչներով, դուրս եկաւ ժողովուրդի առաջ, կեցցէներին դրողացը երկաթ ժամանակ չէր թող տալիս ժամասպառութեան կատարումը: Վեհափառը օրհնեց ժողովուրդը և նստեց աթոռի վրա, առաջ եկաւ մուֆտին և կարգաց մի թուրքերէն ճառ, որի գլխաւոր միտքն այն էր, թէ երկպառակութիւն չը պէտք է սերմանել երկու, մի և նոյն երկրում, մի և նոյն հողի վրա,

թէ այլ է կրօնը, այլ է ազգութիւնը, թէ կրօնի խորութիւնը ամենին չը պէտք է բաժանէ ծնած, սնած, մի և նոյն ջուրը խմած հարեան ազգերի մէջ: Թող անիծեալ լինի այն թշնամին, սատանան, որ սերմանեց կուռ և երկպառակութիւն երկու տարբերի մէջ և պատճառ դարձաւ արեւնհեղութեան: Ապա խօսեց շէյխու-ուլ-իսլամի տեղապահը. «Մենք այսօր առաջինն ենք եկել, ասաց նա, ձեզ, հայերից մօտ, ձեր եկեղեցին, աղօթիւն ձեզ հետ միասին անմոռութեան և ազգայնական զոհերի հոգու համար: Եկե՛ք դուք ևս, գնանք մեր աղօթարանը և աղօթենք մեր ուսուցիչներին ընկածներին հոգու համար և թող այն արեւը, որ թափվեց Բագուում, պարարտացնէ այն հողը, որից ծլել, ամէ եղբայրութեան, մեր երկու ազգերի ապագայ համերաշխութեան և միասնականութեան բողբոջը, որ այսօր մենք ձգեցինք»:

Հոգեհանգստից յետոյ Վեհափառի հրամանով, թեմակալ առաջնորդ Յուսիկ և Մխիթար վարդապետները, ընտրված յանձնաժողովի անդամներ և հայ ժողովուրդի խումբ բազմութեան հետ ընկերացան շիա մանկազակներին ներկայացուցիչներին և գնացին նրանց մզկիթ, ուր շէյխու-ուլ-իսլամի տեղապահը և առաջնորդ Կ. Բեգին եպիսկոպոսը, բարձրանալով մէքար (ամբիոն) վրա, բարոյներ խօսեցին հայրէն և թուրքերէն, որ թարգմանեց երկու լեզուներով Հ. Առաքելեանը, որը նոյնպէս բարձրանալով ամբիոնի վրա՝ մի քանի րոպով թուրքերէն բացատրեց թուրք ժողովուրդին այդ օրվայ հանդէսի իմաստը և նշանակութիւնը:

Երէկ, երկուշաբթի, փետրվարի 14-ին, նոյն Վանքի բակում կատարվեց հանգիստաւոր հոգեհանգիստ վրացիների մասնակցութեամբ: Այս անգամ Վանքի բակը հաւաքվել էր աւելի մեծ բազմութիւն, մօտ 8000 հոգի հայ, վրացի և Յուրք: Ներկայ էին հոգեհանգստին և վրացի հոգեւորականներ: Վրաց ուսանողներ խմբով, հիւանդ Վեհափառ Հայրապետը մի քանի րոպով դուրս եկաւ և օրհնեց ժողովուրդը: Հոգեհանգստից յետոյ վրացիների կողմից մի քանի անձինք ճառեր արտասանեցին ազգերի համերաշխութեան, եղբայրական կապերի և միասնականութեան մասին:

Առաջնորդ Գարեգին եպիսկոպոսը յանուն Հայրապետի, հայ ժողովուրդի և եկեղեցու կողմից շնորհակալութիւն յայտնեց վրաց ուսանողներին—հասարակական եղբայրական անկեղծ զգացումներ արտայայտութեան համար:

Բոլոր արտասանած ճառերի մէջ այն միտքն էր արժանիք, թէ հայերը և վրացիները երկու դարերի հարեաններ և եղբայրակցներ, այսուեւեմ պէտք է դործեն միասին և համերաշխ ընդհանուր կուրուրդի շաղկէ վրա: Հանդէսը ցնցող էր, մխիթարիչ և հոգեպարար:

ԲԱԳՈՒԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Երբեք երեկոյեան են կուրուում էին, որտեղ շատ քիչ հայեր կային և զա զարմանալի էր, որովհետեւ հայերը միշտ շատ են լինում: Բայց շուտով բանը պարզվեց. լուր բերեցին, որ թուրքերը խումբ խումբ գնացին ատրճառակներով և զոհներում անկրկնորէից խփում են բոլոր երեսացող հայերին: Ես գիշերվայ ժամը 12-ին մի կենդ կառնով եկա տուն:

Հետեւեալ օրը, երկուշաբթի, դուրս գալով տնից, մօտ առաւօտեան 10 ժամին, ես հանգիստեցի մի թուրքի կառնի մէջ նստած, որը ինձ տեսնելով ատրճառակ արձակեց, բայց չը կարէ. ես փախումս տուէ՛ր: Դէպի Պարագետը, որտեղ արդէն կանգնած էին զինուորներ, որոնց ես դիմեցի խնդրելով գնալի արձակել կառնով գնացող թուրքի վրա, որը յարձակվեց ինձ վրա, բայց զինուորները պատասխանեցին, թէ իրենք հրաման չունեն հրացան արձակելու: Ես փախաւ մօտայ պ. Սաման Զաւր թուրքի մօտ: Երբեք երեկոյեան են կուրուում էին բնակարանի պատուհաններից այն տեսարանները, որոնք տեղի ունեցան փողոցներում: Երկուշաբթի, երեկուշաբթի և չորեքշաբթի օրերը լրվում էր անընդհատ փառակալարութիւն, մի թի մի խումբ թուրքերէն հայ դուրս գալիս փողոցի անկիւնից և կրակում պատահած հայերին, մերթ մի քանի կառնք արագ գնում էին մէջը թուրք (2—3) և աջ ու ձախ այդ նստածները կրակում էին մեծ ատրճառակներից. առաջին օրը հայերը սարսափահար փախչում էին. Բիբրե-Հէյրաթից եկան մի խումբ հայ բանաւորներ և

ահա այժմ թուրքերն էին փախչում տալիս: Դիւերը եկաւ և ահա թուրքերը յարձակվեցին քաղաքի խուլ փողոցներում գտնված տների և խանութների վրա: Պարագետում թալանեցին 2 խանութ (մէկը Ս. Յարութիւնեանի գրաւածառանոցը): Երեքշաբթի օրերը սկսեցին արդէն կրակել և փողոցները խառն մարկեցան խմբերից, բայց հրացանաձգութիւնը սկսեց կոտորներից և զանազան անկրկնորէից: Մարագետի էր պատուհանից տեսնել ինչպէս են կրակում զօրքերը. երբ անգամ կարճ և չոր գալով և ընկնում էին փախչող թուրքեր և հայեր: Այդպէս շարունակվեց մինչև չորեքշաբթի ժամը 4-ը, երբ հաշտութիւն կապվեց հայերի և թուրքերի մէջ: Զոհերի ընդհանուր թիւը հաշոււ է մօտ 1000 մարդ երկու կողմից: Բալխանի դեռ չէին սկսել կարգին կոտորել և այժմս հանգիստ է, բայց էլի 20 թուրք են սպանված և 12 հայ:

Ա. Առաքելեան

ԲԱԳՈՒԻ ԱՂԵՏԸ

Առաջ ենք բերում «Բ. Օ.» համակրելի թղթախից Օրեստ Սեմինի երրորդ նամակը: Բագու, 10 փետրվարի: Հաղորդում եմ հայ թուրքական կոտորածի փետրվարի 9-ի մանրամասնութիւնները. այդ օրը ջարդը հասաւ իր գագաթնակէտին: Փետրվարի 9-ի ցերեկվայ ժամը 11-ին, առաւելան դրամայի արտիստ պ. Մօսկոյի հետ միասին Պարագետից, որի մօտ փռված էին երկու ձիերի դիակներ, ուղեւորվեցին դէպի Վօրոնցովի փողոցը, որպէսզի գնան հասնեն Բագուի մօտիկ և Լազարիայի տան հրդեհի վայրը: Ծանապարհին, անկիւնին մօտ, «Մարդիկ» հիւրանոցի մօտ, մենք տեսանք մի ռուս աղվաշ այլաբանակալ դիակը: Նա դեռ բռնած ունէր ձեռքին դալաներ և մի շիշ գինի, որ փախցրել էր այդտեղ գտնվող հայի մի գինետուն կողոպտելու ժամանակ: Ինչպէս մեզ հաղորդեցին դրացիները, թուրքերի հետ միասին գինետունը թալանում էին և «բօսիակ»-ները, որոնց թոււ էր և սպանված կիրը: Մօսկոյի մօտ Բագուի մօտ, Եկեղեցական փողոցում, մենք տեսանք մի զարհուրելի պատկեր: Տան առաջի ամբողջ սալայատակը բռնված էր կոտորածներով, այդտեղ փռված էին 4 թուրքերի դիակներ՝ անկանոն կերպով: Ամբողջ առաւել, իսկապէս երկու տուն—Բագուի անհանի և տիկ. Լազարեանի (Ք.Ն. 93 և 95)—նեղակայացում է մի միապաղաղ, այրված աւերակ:

Շէնքի պատերը նախված են գնդակների հազարաւոր փոսիկներով: Շէնքի ներսում պատերին աւելի եւս զարհուրելի էր: 17-ի չափ դիակներ իրար վրա կուտակվել էին, աշակերպված, ածխացած: Նրանց մէջ կային 5 երեխաների դիակներ: Դրանք Աղամեանի, Բագուի անհանի, Թագեղանի և ուրիշների ընտանիքներն էին: Կան առանձին և վրացիներ էլ: Ոստիկանութեան ասելով՝ Բագուի անհանի տներում սպանվել են գնդակներից և հրդեհից 24 հոգի, բայց այդ թիւն իրականից պակաս է, որովհետեւ բացի յիշված 17 այրվածները, առաւօտեան աշտուկից—փողոցից տարել են 12 դիակ և 4 հատ էլ դեռ ընկած էին փողոցում: Ընդամենը 33 զոհ: Բագուի անհանի տան մօտից մենք գնացինք Վօրոնցովի փողոցով հետեւալ գուգանեական Եկեղեցական փողոցը: Այնտեղ, անկիւնում էլ դեռ մնում էին երկու շէնք, չը գիտեմ ում, իսկ Վօրոնցովի փողոցից բայրժ մարդու սարսուռ է պատճառում: Աւրանեանի կողոպտած անգինի տունը ժամը 11½ էր: Ծամախու թաղի կողմից մեր ահանջին էին հասնում թուրքերի վայրենի աղաղակները. նրանք Ղուրայի մէջընտում շրջապատել և կրակ էին գցում Լալայեանի տանը: Երբ մենք մօտեցանք, հրդեհն արդէն լաւ փռւած էր լուսամուտները վերին մասերը տան բոլոր դռներն ու շրջանակները կոտորված էին, իրերը փողոց դուրս թափված և այրված... Ամբողջ փողոցը կոտորած լի շուր զոհեր, ծարաւելով արեան: Շուտով ի Չօրոնցովի տանը փողոցից վերն հրաձգութիւն լսվեց, լսվեցին փռվող ապակիների զնգը և փողոցի սալայատակի վրա կազմվեց մի խառն չը գիտեմ ում տնից դուրս նստած իրերից: Շուտով եկան կազակներ... Այդտեղից մենք նորից իջանք Լալայեանի տան մօտ: Յանկարժ ձախ կողմին փողոցիկում, վրասով կոշիկալարի խանութի ետեկից լսվեցին զնքի որոտներ: Վագոււ ենք այնտեղ և տեսնում, թէ ինչպէս հայի տունը ներս խուժած թուրք ամբողջ տանջում և մորթում է տան բնակիչներին:

Ահա լուսամուտից դուրս թուա մի արհես-

տաւորի արեւնաղալ դիակը, յետոյ դուրս թուա բարձր, աթոռներ: Ամբողջ թափվեց նրանց վրա և սկսեց ամեն ինչ պատառոտել և կոտորատել... Իսկ բակի մէջ այդ պահուն որոտում էին զէնքերը: Երբ նրանք հանդարտվեցին, մենք բակը մտանք և այնտեղ տեսանք արեան մէջ լողացող 7 դիակ... Զգալով, որ շէնքս ինձ դաւաճանում են, ես քարշ տուի ընկերոջս տուն: Սակայն հաղիւ մենք անց էինք կացել երկու փողոց, երբ Լալայեանի տան մօտ զէնքեր որոտացան: Մենք յետ նայեցինք և մեր աչքի առաջ տեղի ունեցած հետեւալ ցնցող տեսարանը: Լալայեանի տան հետքայի մէջդանի կողմի մեծ դռնից դուրս եկան մի խումբ թուրքեր, որոնք օղակի նման շրջապատել էին Լալայեանին և նրա կնոջը, որ փաթաթվել էր իր ամուսնուն: Թուրք ամբողջ վայրենի ոռնոցներով յարձակվեց Լալայեանի պաշտպաններին վրա: Օդի մէջ փայլեցին խէշաւները, որոտացին հրազենները, բայց Լալայեանը դեռ շարունակում էր առաջ շարժվել... Եւ յանկարժ—պատկերը խիստ կերպով փոխվեց. Լալայեանին շրջապատող օղակը պատվեց և նրան մէջքից վերաւորեցին մի քանի գնդակով... Նա վայր ընկաւ և առաջ էր շարժվում չորեքթաթ տալով: Նրա կնիք թեքվեց նրա վրա և իր մարմնով պաշտպանում էր նրան մարդապանների հարուածներից... Բայց որոտացին էլի մի քանի հարուածներ, ուղիղ դէպի տիկին. Լալայեանի մէջքը, և նա երեսի վրա վայր ընկաւ: Սկսեցին խիտ կոտորածակց այդ հերոսուհու դէմքը...

Զարհուրանքից ստուց իմ սիրտը, և ես համարեա վազելով դիմեցի դէպի տուն... Ծանապարհին մեզ պատահեցին այն երկու հայերի դիակները, որոնք դուրս թուա Ծամախու ճանապարհին կողոպտվող տնից և ուղեցին աղաւաղի կաղակները ձիերի ոտքերի արանքում: Կաղակները բռնեցին ձիերը հեռացան, և այդ հայերին պատահա պատահ արեց կատաղած ամբողջ:

Տուն եկալ ես ցերեկվայ ժամը 3-ին: Այդ ժամանակ Զեմբերեշնի փողոցներում ժողովուրդն արդէն զբոսնում էր և թուրքերը բղաւում էին «հաշտութիւն, գինաղաղութիւն»...

Մարտում էր մարդ այդ չը տեսնված լուսաթիւնից, մանաւանդ ուշ գիշերով, երբ ես հէր գնացածս տնից վերադառնում էի տուն...

Պաղաղութեան հաստատութեան մասին եղած անվստահութիւնն ապացուցվում է և նրա նով, որ հայերն այսօր էլ չեն թողել իրանց գինված դիւքերը Տօրգովի փողոցում, Մալալեանի այգու մօտերը և ուրիշ տեղերում, վախենալով, որ իրանց յանկարծակի կը բերեն: Այս առաւօտ ես գնացի երկաթուղու կայան: Փողոցներում չը տեսնված կենդանութիւն է տիրում, բայց հայերի խանութներից շատերը դեռ չէին բացված: Կայարանում ահագին թաղ մեկնողներ կային Բագուից: Ով որ կարող է շտապով աշխատում է հեռանալ Բագուից:

Մտնում եմ հեռազրատուն:

Հազարաւոր հեռազրատներ կան. «դեռ խաղաղ է», «այս ինչը սպանված է», «այն ինչը կենդանի է և դեռ լաւ է» և այլն:

Հեռազրով հարցնում եմ, թէ ինչ է կատարվում Բալխանի մօտ:

«Արդէն երկու օր է գործադուլ է—բանաւորները վրդովված են Բագուում, կատարվածներից և... կոտորած: Կողոպտում են խանութները և իրար սպանում: Բիշլիկից սպասում են թուրքերին... այդպէս պատասխանեցին ինձ Բալխանից»:

Օրեստ Սեմին

Այսօր, երբ ամբողջ Ռուսաստանը սթափվում է իրան կաշկանդող խոր քնից, երբ ամեն տեղ տիրում է ընդհանուր շարժում լաւագոյն ապագայ ստեղծելու համար, այն այսօր, այս ընդհանուր ոգևորութեան ժամանակ Բագուի դէպքերը, այս վերին աստիճանի ցաւալի անհամաձայնութիւնը իբրեւ զարհուրելի դիսոնանս են ներկայանում մեզ: Այս դէպքերի դիմաց մարդու սիրտը պատռվում է և տեղի ունենում այդ բոլորը—այն ժամանակ, երբ պիտի վերջ դրվի ընդհանրեան, երբ պիտի ողնացվի այսօրվայ կարգերը, երբ մեր երեւակայութեան մէջ արդէն այնքան պարզ նկատվում է մարդկային ազատ կեանքը, երբ հարկաւոր է, որ բոլոր կովկասեան ազգերը

ձեռք
կատ
թեան
—ա
պան
մեզ
մեր
խաւ
հար
բայ
քնն
Իսկ
այս
ուր
հաս
խոս
ամբ
հետ
թեան
գու
այս
ազ
կով
բը
տու
միայ
ված
կա
իր
բայ
սթա
ներ
մեզ
միայ
զին
ուժ
թեան
բայ
մեզ
բայ
կար

Իսկ
կատ
փից
կայ
գաւ
մի
հեր
րել
ցող
ս
բար
ամ
յան
յան
Ի դ

Իսկ
աղե
կատ
թող
հեա
գա
Բալ
հնա
որ Բ
թեան
ներ
ուն
բում
հեր
ու
և դ
Ար
և խ
հոր
հոր
հոր
Թող

Կով
զեն
առ
է Բ
թեան
տան
նոր
սր
տա
Գար
տի
պ
հա
Իսկ
է Դ
կող

մը 10—11. Սօլօլանի փող. № 6.
(ա. Ե.) 48—50